ՀՀ ԳԱԱ ՊՐԵԶԻԴԵՆՏ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ֆ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆԻՍՏ

Սեպտեմբերի 18-ին Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նիստերի մեծ դահլիճում կայացավ ԳԱԱ նախագահության ընդլայնված նիստը՝ նվիրված ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանի ծննդյան 80-ամյակին:

Նիստը նախագահում էր ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Ս. Համբարձումյանը: Բացելով նիստը և ակադեմիայի բոլոր աշխատողների անունից ողջունելով հոբելյարին, նա նշեց այն մեծ դերը, որ կատարել է Ֆ. Սարգսյանը Հայաստանում գիտության նոր ճյուղերի ստեղծման ու զարգացման գործում, կանգ առավ նրա՝ ՀԽՍՀ կառավարության ղեկավար աշխատած տարիների գործունեության վրա, որի ընթացքում հսկայական գործ է կատարվել Հայաստանում գիտության և տեխնիկայի զարգացման, արդյունաբերական նոր ուղղությունների ստեղծման ուղղությամբ: Կատարված աշխատանքը, ասաց Ս. Համբարձումյանը, ոչ միայն կերպարանափոխեցին հանրապետությունն ու նրա գիտատեխնիկական մակարդակը, այլև մարդկանց, նրանց մտածելաձևը: Այդ տարիներին կառուցվում էին գիտահետազոտական հիմնարկներ, ստեղծվում գիտության նոր ուղղություններ՝ գիտությանը, կրթությանը և մշակույթին վերելքի հսկայական թափ հաղորդելով:

Նիստում հրապարակվեցին ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանի ու վարչապետ Ա. Մարգարյանի շնորհավորագրերը: ԱԺ նախագահ Ա. Բաղդասարյանը հանգես եկավ ջերմ ելույթով՝ Ֆ. Սարգսյանին բնութագրելով իբրև պետական խոշոր գործչի, իբրև մարդ անհատականության և իբրև ակադեմիայի պրեզիդենտի:

Տեղեկացնելով, որ Ֆ. Սարգսյանը պարգևատրվել է Մայր Աթոռի ամենաբարձր պարգևով՝ «Սբ. Սահակ – Սբ. Մեսրոպ» շքանշանով, որը նա ստացել է մեկ օր առաջ, Սբ. Էջմիածնում, Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն ասաց, որ Հայաստանի կառավարության ղեկավար եղած տարիներին հոբելյարը մեծ ջանք է թափել մայր եկեղեցուն աջակցելու, նրա դիրքերն ամրապնդելու համար և արժանացել Վազգեն Ա կաթողիկոսի արժանի գնահատականին:

Ֆ. Սարգսյանին ողջունեցին ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը, Երևանի քաղաքապետ Ե. Զախարյանը, ՀՀ կրթության և գիտության նախարար Ս. Երիցյանը, Լենինյան մրցանակի դափնեկիր Ռ. Աթոյանը, ՀՀ պետական բուհերի ռեկտորների խորհրդի նախագահ, ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը:

ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Ա. Դրյուկովը, ողջունելով Ֆ. Սարգսյանին, միաժամանակ նրան փոխանցեց Ռուսաստանի կառավարության ողջույնը՝ Ի. Կլեբանովի ստորագրությամբ, այլ կազմակերպությունների շնորհավորանքներ:

Նախագահողը հայտարարեց, որ ստացվել են բազմաթիվ շնորհավորանքներ, հեռագրեր, նամակներ, այդ թվում ՀՀ նախարարներ Վ. Օսկանյանից, Ս. Սարգսյանից, ԼՂՀ նախագահ Ա. Ղուկասյանից և ուրիշներից: